«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ՀՀ, Սյունիքի մարզ, Քաջարան, 3309, Լեռնագործների փողոց, 18,

Հեռ .՝ +374 285 33131, Էլ. փոստ՝ info@zcmc.am

25.11.2025

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

Նախնական որակավորում, մասնակիցներին ներկայացվող չափանիշները.

1. Պահանջվող տեսակի և բեռնունակության առնվազն ութ՝ (8) սեփականության իրավունքով պատկանող և/կամ լիզինգի պայմանագրով ժամանակավոր տիրապետման և օգտագործման հանձնված ինքնաթափ մեքենաներ, որոնք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարգով սորուն բեռների փոխադրման թույլտվություն:

** Հավաստող փաստաթղթեր. Մասնակցի կողմից պետք է տրամադրվեն տրանսպորտային միջոցների սեփականության վկայականների և տեխնիկական անձնագրերի պատճենները:*

2. Մասնակից ընկերությունը պետք է ունենա առնվազն 1 (մեկ) տարվա գրանցում՝ հաշվարկված գնման գործընթացի վերաբերյալ հայտարարության ամսաթվից:

** Մասնակիցը պետք է ներկայացնի քաղվածք իրավաբանական անձանց պետական ռեգիստրից:*

3. Մասնակիցը չպետք է գտնվի լուծարման, սնանկացման կամ վերակազմակերպման գործընթացում և չպետք է ունենա ժամկետանց հարկային պարտավորություններ:

** Մասնակիցը պետք է ներկայացնի տեղեկանք հարկային մարմնից և ընկերության գործադիր մարմնի ղեկավարի գրավոր հայտարարությունն առ այն, որ ընկերությունը չի գտնվում լուծարման, սնանկացման կամ վերակազմակերպման գործընթացում:*

Փոխկապակցված անձանց առկայության դեպքում մասնակիցն իրավասու է առաջարկ ներկայացնել միայն մեկ ընկերության անունից: Երկու կամ ավելի փոխկապակցված անձանց անունից ներկայացված առաջարկները չեն դիտարկվի: Անձանց փոխկապակցվածության, անձանց խմբի հատկանիշների առկայությունը գնահատվելու է «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն:

** Մասնակիցների կողմից պետք է ներկայացվի իրական շահառուի (UBO) վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ընկերության կորպորատիվ կառուցվածքի գծապատկերը:*

4. Մասնակից ընկերության վերջին 12 ամիսների (2024 թվականի նոյեմբերից մինչև 2025 թվականի հոկտեմբերը ներառյալ) հասույթը պետք է կազմի առնվազն 200 միլիոն ՀՀ դրամ:

* *Մասնակիցը պետք է ներկայացնի տեղեկանք հարկային մարմնից:*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ 04 դեկտեմբերի 2025 թվական, մինչև ժամը 18:00-ը: Վերոնշյալ փաստաթղթերի սկանավորված պատճենները պետք է ուղարկվեն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ logistic-tender@zcmc.am:

Պետական մարմիններից ստացվող փաստաթղթերի տրման ամսաթիվը **պետք է լինի ոչ վաղ, քան դրանք «ԶՊՄԿ»-ին ներկայացնելու ամսաթվին նախորդող 5-րդ օրը:**

Փաստաթղթերը պետք է ուղարկվեն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ logistic-tender@zcmc.am՝ մեկ փաթեթով:

Եթե ֆայլերի ընդհանուր չափը գերազանցում է 25 ՄԲ-ը, մասնակիցը պետք է դրանք վերբեռնի հասանելիություն ապահովող ամպային պահեստում (cloud storage), և դրանց հասանելիության/ներբեռնման հղումը ուղարկի հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ logistic-tender@zcmc.am:

Վերոնշյալ ժամկետից հետո ներկայացված, ինչպես նաև վերը նշված պահանջներին չհամապատասխանող փաստաթղթերը ենթակա չեն դիտարկման, և մասնակցին թույլ չի տրվի մասնակցել մրցույթի երկրորդ փուլին:

Մրցույթի առաջին փուլը հաղթահարած մասնակիցները **մինչև 2025 թվականի դեկտեմբերի 12-ը** կստանան գրավոր հրավեր մրցույթի երկրորդ փուլին մասնակցելու համար:

ՄՐՑՈՒՅԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Ամփոփ տեղեկատվություն և հիմնական պայմաններ.

• **Բեռնափոխադրումների ժամանակահատվածը.** 2026 թվական.

• **Փոխադրման ենթակա բեռի ծավալը.** Ընդհանուր ծավալը՝ 200,000 տոննա, +/- 10% տոլերանս.

• **Փոխադրման երթուղին**. **1.** ՀՀ, Քաջարան, «ԶՊՄԿ» խտանյութի պահեստ - ՀՀ, ք. Երևան, «Ապավեն» տերմինալ և/կամ «Մետեքսիմ» տերմինալ. **2.** ՀՀ, քաղ. Քաջարան, «ԶՊՄԿ» խտանյութի պահեստ - ՀՀ, քաղ. Չարենցավան

• **Լոտերի թիվը.** Լոտ 1՝ ընդհանուր ծավալի 40%-ը, Լոտ 2՝ ընդհանուր ծավալի 30%-ը, Լոտ 3՝ ընդհանուր ծավալի 20%-ը, Լոտ 4՝ ընդհանուր ծավալի 10%-ը: Բոլոր լոտերի համար կիրառվում է +/- 10% տոլերանս (ծավալա-քաշային տատանում):

• **Բեռի տեսակը յուրաքանչյուր լոտում.** Պղնձի խտանյութ (առանց փաթեթավորման, կույտով)՝ ծավալի 90%-ը (առաքում դեպի Երևան), Մոլիբդենի խտանյութ (փաթեթավորում մեծ պարկերով («big bag»))՝ ծավալի 8.5%-ը, (առաքում դեպի Երևան), Մոլիբդենի խտանյութ (փաթեթավորում մեծ պարկերով («big bag»))՝ ծավալի 1.5%-ը, (առաքում դեպի Չարենցավան)

• **Յուրաքանչյուր լոտի փոխադրման օրացուցային ժամանակացույցը.** հավասարաչափ բաշխվածություն՝ տարվա ընթացքում:

• **Հաղթող մասնակցի ընտրությունը.**

- մասնակիցը ներկայացնում է 1 տոննա բեռի փոխադրման համար մեկ միասնական գնառաջարկ՝ ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի, և մասնակցում է մրցութային գործընթացին բոլոր լոտերի համար:

- 1 տոննա բեռի փոխադրման համար ներկայացվող առավելագույն գնառաջարկը չպետք է գերազանցի 18,000 ՀՀ դրամը, առանց ԱԱՀ-ի:

- Լոտ 1-ի հաղթող է ճանաչվում 1 տ բեռի փոխադրման համար առավել ցածր գնառաջարկ ներկայացրած մասնակիցը:

- Լոտ 2-ի հաղթող է ճանաչվում 1 տ բեռի փոխադրման համար երկրորդ առավել ցածր գնառաջարկ ներկայացրած մասնակիցը:

- Լոտ 3-ի և Լոտ 4-ի համար հաղթող կարող է ճանաչվել մեկ կամ մի քանի մասնակից: Լոտ 3-ի և Լոտ 4-ի հաղթողների ընտրությունը կատարվում է Գնման հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները. մասնակցի կողմից բեռնափոխադրման համար ներկայացված գնառաջարկը, «ԶՊՄԿ»-ի հետ նախկին համագործակցության փորձը, կայուն զարգացման չափանիշները:

• **Գնառաջարկի ամրագրումը կոմերցիոն առաջարկում, և ծավալների բաշխման ալգորիթմը.**

Յուրաքանչյուր մասնակից կարող է հաղթող ճանաչվել միայն մեկ Լոտում, բացառությամբ «ԶՊՄԿ» ՓԲԸ Գնման հանձնաժողովի որոշմամբ մի քանի Լոտերի միավորման դեպքերի:

Մասնակցության հայտ ներկայացնող ընկերությունները բեռնափոխադրման արժեքի առաջարկ ներկայացնելով հաստատում են, որ անվերապահ պատրաստ են բեռնափոխադրման ծառայությունը մատուցել առաջարկվող գնով՝ անկախ հաղթած Լոտից/բեռնափոխադրման ծավալից:

Լոտ 1-ի համար մի քանի մասնակիցների կողմից հավասար նվազագույն գին ներկայացնելու դեպքում տեղի է ունենում Լոտ 1-ի և Լոտ 2-ի միավորում (արդյունքում ստանալով ընդհանուր ծավալի 70%-ը), և այդ ծավալը հավասարապես բաշխվում է հաղթող ճանաչված մասնակիցների միջև: Եթե հավասար գնառաջարկ են ներկայացրել երեք կամ ավելի մասնակից, ապա Գնման հանձնաժողովը, հաշվի առնելով հավասար գնառաջարկների թիվը և այլ գործոնները, իրավունք ունի Լոտ 1-ի և Լոտ 2-ի հետ միավորել նաև Լոտ 3-ը և/կամ Լոտ 4-ը (արդյունքում ստանալով ընդհանուր ծավալի 80%-ը, 90%-ը կամ 100%-ը): Միավորված ծավալը հավասարապես բաշխվում է հաղթող ճանաչված մասնակիցների միջև:

Եթե Լոտ 1-ով հաղթող է ճանաչվում մեկ մասնակից և, եթե Լոտ 2-ի համար երկրորդ առավել ցածր հավասար գինը ներկայացրել են միաժամանակ մի քանի մասնակիցներ, ապա Գնման հանձնաժողովը, հաշվի առնելով հավասար գնառաջարկների թիվը և այլ գործոնները, իրավունք ունի Լոտ 2-ը միավորել Լոտ 3-ի և/կամ Լոտ 4-ի հետ (ընդհանուր ծավալի 40%-ը, 50%-ը կամ 60%-ը): Միավորված ծավալը հավասարապես բաշխվում է հաղթող ճանաչված մասնակիցների միջև:

Հավասար են համարվում 1 տ բեռնափոխադրման համար մինչև 100 ՀՀ դրամ տարբերությամբ գները:

Փոխկապակցված անձանց մասնակցության, հակամրցակցային համաձայնություն կնքված լինելու վերաբերյալ հատկանիշների կամ մրցույթի և օրենսդրությամբ սահմանված պահանջներին հակասող այնպիսի վարքագծի հայտնաբերման դեպքում, որը կարող է բացասաբար ազդել մրցույթային ընթացակարգի օրինականության և օբյեկտիվության վրա, Գնման հանձնաժողովը, ելնելով ԶՊՄԿ-ի շահերից, իրեն իրավունք է վերապահում կայացնել համապատասխան որոշում մասնակիցների և/կամ մրցույթային ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ:

Վճարման պայմանները. Բեռնափոխադրման ծառայությունների մատուցման ժամկետի ավարտից հետո 45 (քառասունհինգ) օրացուցային օրվա ընթացքում: Բեռնափոխադրման ծառայությունների մատուցման ժամկետ է համարվում մեկ օրացուցային ամիսը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթի երկրորդ փուլին մասնակցության համար մասնակիցներն իրենց առաջարկները պետք է ներկայացնեն սույն հայտարարության **Հավելված №1-ում** ներկայացված ձևաչափով, կազմակերպության կնիքով կնքված փակ ծրարով, ինչպես նաև ծրարին կից՝ ուղեկցող նամակով, որը պետք է կազմված լինի երկու օրինակից:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ 2025 թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը 9:00-ից մինչև 18:00-ը: Ծրարները պետք է անձամբ առձեռն հանձնվեն Ընկերության Գործադիր տնօրեն Անդրեյ Անատոլիևիչ Սինյակովին «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 2, «Կամար» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Սահմանված ժամկետից հետո ստացված ծրարները չեն դիտարկվի:

Սույն մրցույթի շրջանակներում կոմերցիոն առաջարկներ ներկայացնող մասնակիցները ընդունում և անվերապահ համաձայնում են բեռնափոխադրման պայմանագրի պայմաններին, որի ձևանմուշը ներկայացված է սույն մրցույթի հայտարարության **Հավելված 2-ի տեսքով**:

Ծրարները կբացվեն «ԶՊՄԿ» ՓԲԸ ՆՏԱՏ Գնման հանձնաժողովի նիստի ժամանակ՝ 2025 թ. դեկտեմբերի 17-ին:

Մրցույթի երկրորդ փուլի յուրաքանչյուր մասնակից գրավոր կերպով կտեղեկացվի «ԶՊՄԿ» ՓԲԸ Գնման հանձնաժողովի որոշման մասին ծրարների բացման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Армения, 3309, Сюникская область, г. Каджаран, ул. Лернагорцнери, дом 18

Тел: +374 285 33131, Эл. почта: info@zcmc.am

25.11.2025

КОНКУРСКНОЕ ОБЪЯВЛЕНИЕ

ПЕРВЫЙ ЭТАП КОНКУРСА

Предварительная квалификация, критерии к участникам:

1. Наличие не менее восьми (8) собственных и/или находящихся в лизинге единиц грузовой самосвальной техники, требуемого типа и грузоподъёмности, имеющих в соответствии с законодательством Республики Армения разрешение на перевозку сыпучих грузов;

** Подтверждающие документы: Копии свидетельств собственности и технических паспортов транспортных средств предоставляются участником.*

2. Дата регистрации Компании — не менее 1 (одного) года на момент подачи Коммерческого предложения, отсчитываемых с даты объявления о проведении закупки;

** Участником предоставляется Выписка из государственного регистра юридических лиц.*

3. Участник не должен находиться в процессе ликвидации, банкротства, реорганизации, не иметь просроченных налоговых обязательств;

** Участником предоставляются справка из налоговой службы и письменное заверение руководителя исполнительного органа компании об отсутствии в отношении компании процесса ликвидации, банкротства и реорганизации.*

При наличии аффилированных лиц участник вправе подать предложение только от одной компании. В случае подачи предложений от двух и более аффилированных лиц, все такие предложения не подлежат рассмотрению. Аффилированные лица (группа лиц) определяются в соответствии со статьёй 4 Закона РА «О защите экономической конкуренции и интересов потребителей».

** Участником предоставляются сведения об окончательном бенефициарном владельце (UBO) и схема корпоративной структуры.*

4. Выручка за последние 12 месяцев (с ноября 2024 года по октябрь 2025 года включительно) — не менее 200 млн драм РА.

** Участником предоставляется справка из налогового органа.*

ПРИМЕЧАНИЕ

КРАЙНИЙ СРОК ПОДАЧИ ДОКУМЕНТОВ — 04 декабря 2025 года до 18:00. Скан-копии вышеуказанных документов необходимо направить на электронную почту: logistic-tender@zcmc.am

Дата выдачи документов, получаемых от государственных органов должна быть **не позднее чем за 5 дней до даты подачи в ЗММК.**

Документы должны быть направлены на электронную почту: logistic-tender@zcmc.am одним пакетом.

В случае, если общий объём файлов превышает 25 МБ, участник обязан загрузить их в облачное хранилище с доступом и предоставить ссылку для просмотра/скачивания на электронную почту: logistic-tender@zcmc.am.

Документы, направленные после вышеуказанного срока, а также документы, несоответствующие вышеуказанным требованиям не подлежат рассмотрению, и участник не допускается к переходу на второй этап конкурса.

Участники, прошедшие первый этап конкурса, **до 12 декабря 2025 года включительно** будут письменно приглашены к участию во втором этапе конкурса.

ВТОРОЙ ЭТАП КОНКУРСА

Краткая информация и основные условия:

• **Период перевозок:** 2026 год;

• **Количество:** общий объем 200 000 т толеранс +/- 10%;

• **Маршрут**: **1**. РА, г.Каджаран, склад концентрата ЗММК - РА, г.Ереван, Терминал Апавен и/или терминал Метексим, **2.** РА, г.Каджаран, склад концентрата ЗММК - РА, г. Чаренцаван

• **Количество лотов:** 1 лот – 40% общего объема; 2 лот – 30% общего объема; 3 лот – 20% общего объема; 4 лот – 10% общего объема. Ко всем лотам применяется толеранс +/- 10%;

• **Тип груза в каждом лоте:** Концентрат меди (без упаковки, навал) – 90 % объема (доставка в Ереван), Концентрат молибдена(упаковка биг-бэг) – 8.5% объема ; (доставка в Ереван), Концентрат молибдена(упаковка биг-бэг) – 1.5% объема ; (доставка в Чаренцаван),

• **Календарный план перевозок по каждому лоту:** равномерно в течении года;

• **Определение победителя**:

- участник предоставляет единую цену за перевозку 1 т в драмах РА без НДС и участвует в процедуре по всем лотам;

- максимальная предложенная цена перевозки 1 т не должна превышать 18 000 драмов РА без НДС;

- победителем лота номер 1 считается участник предложивший наименьшую цену перевозки за 1 т;

- победителем лота номер 2 считается участник предложивший вторую минимальную цену перевозки за 1 т;

- победителем лотов номер 3 и 4 может быть выбран один или несколько участников. Определение победителей по лоту номер 3 и 4 принимается Закупочной комиссией с учетом факторов: предложенная участником цена перевозки, опыт работы с ЗММК, критерии устойчивого развития.

• **Фиксирование цены в коммерческом предложении и алгоритм распределения объемов**:

Каждый участник может быть победителем только одного лота: Лот 1, Лот 2, Лот 3 и Лот 4, за исключением случая, когда по решению Закупочной комиссии ЗАО «ЗММК» несколько лотов будут объединены.

Компании, подающие заявку на участие указывают стоимость перевозки с учетом того, что они безусловно готовы оказывать услугу по перевозке по предложенной цене вне зависимости от выигранного лота/объема перевозки;

В случае наличия равных наименьших цен от нескольких участников по Лоту 1 происходит объединение Лота 1 и Лота 2 (70% общего объема), и объем распределяется равномерно между участниками, признанными победителями. Если участников с равными ценами 3 и более, Закупочная комиссия вправе объединить, кроме Лотов 1 и 2, также Лоты 3 и/или 4 (80%, 90% или 100% общего объема), при этом учитываются количество равных предложений и иные факторы по усмотрению Закупочной комиссии. Объем распределяется равномерно между участниками, признанными победителями.

В случае, если победителем по Лоту 1 является один участник, а также при наличии второй минимальной цены с равными предложениями от нескольких участников по Лоту 2 Закупочная комиссия вправе объединить Лот 2 с Лотами 3 и/или 4 (40%, 50% или 60% общего

объема), в зависимости от количества равных предложений и прочих факторов, и объем распределяется равномерно между участниками, признанными победителями.

Цены за перевозку 1 т считаются равными при разнице не более 100 драм между участниками.

Закупочная комиссия, исходя из интересов ЗММК, оставляет за собой право, в случае выявления участия аффилированных лиц, признаков антиконкурентных соглашений или иных обстоятельств, не соответствующих установленным требованиям и требованиям законодательства, а также способных негативно повлиять на законность и объективность процедуры, принять необходимое решение в отношении участников и/или дальнейшего проведения конкурсной процедуры.

Условия оплаты: в течение 45 (сорока пяти) календарных дней после окончания периода оказания услуг по перевозке. Периодом оказания услуг по перевозке считается один календарный месяц.

ПРИМЕЧАНИЕ

Предложения по форме **Приложения №1** к настоящему объявлению для второго этапа конкурса предоставляются участниками в закрытом конверте с печатью организации, вместе с сопроводительным письмом в двух экземплярах, прикреплённой к конверту.

СРОК ПОДАЧИ ДОКУМЕНТОВ ПО ВТОРОМУ ЭТАПУ — 16 декабря 2025 года с 09:00 до 18:00. Конверты нужно доставить по адресу ЗАО «ЗММК» 0010, РА, г. Ереван, ул. В. Саргсяна 2, Бизнес-центр «Камар», 9-й этаж, и передать лично Исполнительному директору Компании Синякову Андрею Анатольевичу.

Конверты, поступившие после указанного срока, не подлежат рассмотрению.

Участники, представившие коммерческие предложения по настоящему конкурсу, принимают и безотзывно соглашаются с положениями и условиями договора грузоперевозки, шаблон которого представлен в **Приложении №2** к настоящему конкурсному объявлению.

Конверты будут вскрыты на заседании Закупочной комиссии при Дирекции по МТО ЗАО «ЗММК» 17 декабря 2025 года.

В течении пяти рабочих дней, после вскрытия конвертов, каждый участник второго этапа конкурса будет письменно проинформирован о решении Закупочной комиссии по представленному коммерческому предложению.

«ԶՊՄԿ» ՓԲԸ-Ի ՆՏԱՏ ԳՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՈՒՂՂՎԱԾ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ԳՆԱՌԱՋԱՐԿ / КОММЕРЧЕСКОЕ ПРЕДЛОЖЕНИЕ УЧАСТНИКА КОНКУРСНОГО ЭТАПА 2
к Закупочной комиссии при Дирекции по МТО ЗАО «ЗММК»

---

1. Մասնակցի տվյալներ / Информация об участнике:

Ընկերության անվանում՝
Наименование организации: _____
Գտնվելու վայրի հասցե՝
Юридический адрес: _____
Գործունեության վայրի հասցե՝
Фактический адрес: _____
Պետ. գրանցման համար՝
Гос. Рег. номер: _____
ՀՎՀՀ՝
ИНН: _____
Հեռախոսահամար, Էլ. Փոստ
Телефон, E-mail: _____
Պատասխանատու անձ՝
Контактное лицо: _____

2. Գնառաջարկ՝ ՀՀ դրամով, առանց ԱԱՀ
Ценовое предложение в драмах РА, без НДС:

Փոխադրման երթուղին/Маршрут перевозки 1. **Քաջարան- Երևան/ Каджаран – Ереван** (պղնձի խտանյութ- առանց փաթեթավորման/ медный концентрат - навалом, մոլիբդենի խտանյութ-փաթեթավորում «big bag»/молибденовый концентрат - в биг-бэгах) 2. **Քաջարան – Չարենցավան/ Каджаран - Чаренцаван** (մոլիբդենի խտանյութ-փաթեթավորում «big bag»/молибденовый концентрат - в биг-бэгах)	**1տ համար միասնական գին/ Единая цена за 1 тн**

Ամսաթիվ / Дата: «___» _____ 2025 г.

Ստորագրություն / կնիք Подпись / печать[1]: _____
Ա. Ա. Հ. , Պաշտոն/ ФИО, должность

---

[1] Կանոնադրությամբ լիազորություն ունեցող գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությունը, այլ լիազորված անձի կողմից ստորագրման դեպքում կից ներկայացնել ստորագրողի լիազորությունը հավաստող փաստաթղթերը, ներառյալ՝ լիազորագրի բնօրինակը և անձնագրի պատճեն/*Подпись руководителя исполнительного органа участника в соответствии с уставом участника, либо, в случае подписания иным уполномоченным лицом — к форме необходимо приложить документы, подтверждающие полномочия подписанта, включая оригинал доверенности, и копия паспорта.*

Հավելված/Приложение №2
«ԶՊՄԿ» ՓԲԸ-Ի 25. 11. 2025 թ. մրցութային հայտարարության/
К Конкурсному объявлению ЗАО «ЗММК» от 25.11.2025г.

ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ք. Քաջարան « ____ » « ____ » 202 թ.

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Հաճախորդ կամ Առաքող)՝ ի դեմս Գործադիր տնօրեն Անդրեյ Սինյակովի, ով գործում է Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից տրված և «Երևան» նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանի կողմից 2023թ. Հուլիսի 10-ին վավերացված, ըստ գրանցամատյանի թիվ 7473, լիազորագրի հիման վրա, մի կողմից, և «---------» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Փոխադրող)՝ ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն ---------- -ի, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, յուրաքանչյուրն առանձին՝ նաև Կողմ), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Փոխադրողը պարտավորվում է վարձատրության դիմաց Հաճախորդի հանձնարարությամբ, իր միջոցներով և իր հաշվին մատուցել սույն Պայմանագրով որոշված բեռի փոխադրման և դրա հետ կապված այլ ծառայություններ, Հաճախորդի կողմից իրեն վստահված բեռը հասցնել նշանակման վայրը և հանձնել Հաճախորդին կամ նրա կողմից բեռի ստացման համար լիազորված անձին՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հավելված 1-ով սահմանված պայմաններով և երթուղիներով:

1.2. Սույն պայմանագրի շրջանակում փոխադրման համար Բեռի կանխատեսվող ընդհանուր մոտավոր քաշը 202--- թվականի համար կազմում է -------- (----------) տոննա, որը սակայն կարող է փոփոխվել՝ պայմանավորված Հաճախորդի մոտ փոխադրման ենթակա Բեռի փաստացի առկայությամբ և/կամ Բեռի փոխադրման անհրաժեշտությամբ: Սույն կետում Բեռի կանխատեսվող ընդհանուր մոտավոր քաշի նշումը չի պարտավորեցնում Հաճախորդին նույնքան քաշով Բեռի ապահովում Փոխադրողին, այլ հանդիսանում է Փոխադրողից ակնկալվող հնարավոր փոխադրման ծավալի ուղենիշ: Սույն պայմանագրի շրջանակում փոխադրված Բեռի փաստացի ընդհանուր քաշը որոշվում է սույն պայմանագրի շրջանակում կնքված Բեռի բոլոր հանձնման-ընդունման ակտերով սահմանված քաշերի հանրագումարով:

1.3. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունները Փոխադրողի կողմից մատուցելու համար հիմք է հանդիսանում սույն Պայմանագրում նշված Հաճախորդի էլեկտրոնային հասցեից Փոխադրողի էլեկտրոնային հասցեին ուղղված գրավոր պատվերը (այսուհետ՝ Հայտ), որում պետք է նշվի փոխադրման ենթակա բեռի տեսակը, երթուղին, ընդհանուր քաշը և բեռնափոխադրման ակնկալվող ամսաթվերը/ժամկետը և ստացողը:

1.4. Սույն պայմանագրի Հավելվածով սահմանված երթուղիներից տարբերվող պայմաններով փոխադրում համաձայնեցնելու պարագայում Կողմերն իրավունք ունեն կնքել (ստորագրել) Հատուկ հայտ՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 4-ով սահմանված ձևով:

1.5. Սույն Պայմանագրով բեռ է համարվում Հաճախորդի արտադրանքը՝ պղնձի կամ մոլիբդենի խտանյութը՝ ընդ որում Հաճախորդի հայեցողությամբ փաթեթավորված կամ առանց փաթեթավորման, ինչպես նաև այլ բեռներ, որոնց մասին կատարված է նշում բեռնափոխադրման համապատասխան հայտում (այսուհետ՝ Բեռներ):

1.6. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում Փոխադրողը պարտավոր է ապահովել համապատասխան ապրանքուղեկից փաստաթղթերի (ուղեկցող փաստաթղթերի) առկայությունը:

1.7. Հայտով նախատեսված լինելու դեպքում, Փոխադրողը պարտավոր է իրականացնել Բեռը նշանակման վայր հասցնելու հետ կապված այնպիսի անհրաժեշտ գործառնություններ, ինչպիսիք են.

– Հաճախորդի հանձնարարությամբ՝ Բեռի փոխադրման հետ կապված անհրաժեշտ այլ ծառայությունների մատուցում:

1.8. Փոխադրողը պարտավոր է սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու և ծառայությունները մատուցելու անձամբ, իսկ դրա անհնարինության դեպքում երրորդ

անձանց ներգրավել միայն Հաճախորդի համաձայնությամբ: Սույն կետին համապատասխան՝ իր պարտականությունների կատարմանը և/կամ ծառայությունների մատուցմանը երրորդ անձանց մասնակից դարձնելու դեպքում Փոխադրողը շարունակում է ամբողջ ծավալով պատասխանատվություն կրել Հաճախորդի առջև սույն Պայմանագրով սահմանած Փոխադրողի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև իր կողմից ներգրավված երրորդ անձանց գործողությունների և/կամ անգործության համար: Փոխադրողը պարտավորվում է բարձման համար տրամադրել միայն Հաճախորդին նախապես տրամադրված ցանկում ներառված տրանսպորտային միջոցները:

1.9. Տեխնիկական անսարքության պատճառով արդեն իսկ սկսած բեռնափոխադրումը նույն տրանսպորտային միջոցով շարունակելու անհնարինության դեպքում Փոխադրողը պարտավոր է սեփական միջոցներով կատարել Բեռի վերաբարձում և բեռնափոխադրումը շարունակել տեխնիկապես սարքին տրանսպորտային միջոցով՝ ապահովելով Բեռի ամբողջականությունը, վնասվածքներից Բեռի պաշտպանվածությունը և պահպանելով բեռնափոխադրման ժամկետները:

1.10. Փոխադրողը երաշխավորում է, որ սույն Պայմանագրով նախատեսված բեռնափոխադրումների իրականացման և ծառայությունների մատուցման համար ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները, թույլտվությունները, համապատասխանության հաստատումները և դրանք հաստատող փաստաթղթերը:

1.11. Փոխադրողը երաշխավորում է, որ սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների անմիջական կառավարումն ու տեխնիկական շահագործումն իրականացնող անձնակազմի որակավորումը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր կանոնների պահանջներին և անձնակազմի անդամներն ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված իրավունք (ներառյալ՝ վկայական, թույլտվություն և այլն):

1.12. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների անմիջական կառավարումն ու տեխնիկական շահագործումն իրականացնող անձնակազմի անդամներն Փոխադրողի աշխատողներն են և ենթարկվում են տրանսպորտային միջոցի կառավարմանը և տեխնիկական շահագործմանը վերաբերող՝ Փոխադրողի կարգադրություններին:

1.13. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների նկատմամբ գույքային իրավունքներով (տիրապետում, օգտագործում և տնօրինում) պայմանավորված ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերի, տուրքերի և պարտադիր վճարումների կատարման պարտականությունը կրում է Փոխադրողը:

1.14. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների պահպանության, անվտանգ շահագործման, տեխնիկապես սարքին վիճակի բերելու պարտականությունը կրում է Փոխադրողը:

1.15. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով, դրանց մեխանիզմներով կամ սարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում Փոխադրողը:

1.16. Փոխադրողը պարտավորվում է պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված և փոխադրվող բեռ(ներ)ի բնույթով և/կամ տեսակով և/կամ որևէ այլ բնութագրիչով պայմանավորված կիրառելի կարգավորումները, ներառյալ (բայց չսահմանափակելով) ՀՀ Կառավարության 20 հուլիսի 2006 թվականի N 1106-Ն «Ծանրաքաշ բեռներ փոխադրելու համար օգտագործվող կամ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված եզրաչափերը գերազանցող կամ երկու և ավելի կցորդների հետ միասին ավտոգնացքի կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների երթևեկության կանոնները և չմասնատվող բեռներ փոխադրող թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու տրամադրման թույլտվության կարգը, տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը և (կամ) մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը, ինչպես նաև մեծ եզրաչափերի առավելագույն չափերը հաստատելու մասին թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» Որոշման պահանջները:

1.17. Պայմանագրի 1.16 կետի դրույթների խախտման (չպահպանման) դեպքում Փոխադրողը պարտավորվում է իր հաշվին պատասխանատվություն կրել դրանք խախտելու համար և

փոխհատուցել խախտման հետևանքով պատճառված վնասը ինչպես հաճախորդին, այնպես էլ երրորդ անձանց:
1.18. Բեռը ենթակա է կշռման ինչպես Հաճախորդից Փոխադրողին հանձնելու պահին (կշռվում է Հաճախորդի միջոցներով), այնպես էլ Փոխադրողից Ստացողին հանձնելու պահին (կշռվում է Ստացողի միջոցներով), ինչի մասին համապատասխան նշումները արվում են Բեռնագրում:

2. ԲԵՌԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Սույն պայմանագրի 1.3. կետով նախատեսված հայտը ստանալուց հետո Փոխադրողը ստուգում (գնահատում) է Հայտում նշված բեռնափոխադրումն իրականացնելու իր հնարավորությունները:
2.2. Հայտը Հաճախորդի կողմից ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան Բեռի բարձման օրը 08:00-ն, Փոխադրողը հաստատում է այն և Հաճախորդին է տրամադրում Հայտով փոխադրման իրականացման համար տրամադրվելիք տրանսպորտային միջոցների քանակը, մակնիշները, առավելագույն թույլատրելի բեռնվածության սահմանաչափերը, համարանիշները, ինչպես նաև վարորդների անձը հաստատող և վարորդական վկայական(ներ)ի տվյալները: Փոխադրողը սույնով հայտարարում և երաշխավորում է, որ երրորդ անձանց վերաբերող հիշյալ անձնական տվյալների տրամադրումը իրականացվում է ՀՀ գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ:
2.3. Եթե Հայտի գնահատման արդյունքում Փոխադրողը պարզում է, որ հանձնարարված բեռնափոխադրումը չի կարող իրականացվել իր կողմից, ապա այդ մասին Հայտը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան Բեռի բարձման օրը 08:00-ն, պատասխան էլեկտրոնային հաղորդագրությամբ տեղեկացնում է Հաճախորդին:
2.4. Եթե Փոխադրողը սույն պայմանագրի 2.3 կետով նախատեսված ժամկետում և կարգով չի տեղեկացնում Հաճախորդին Հայտով նախատեսված ծառայությունների մատուցման անհնարինության մասին (կամ գրավոր հաստատում է Հայտը), ապա Հայտը համարվում է Փոխադրողի կողմից հաստատված և Փոխադրողը պարտավոր է սկսել Բեռի բարձումը կազմակերպելուն ուղղված աշխատանքների իրականացումը և իրավունք չունի հրաժարվել բեռնափոխադրումն իրականացնելուց:
2.5. Հաճախորդը ապահովում է տրանսպորտային միջոցների բարձումը՝ տրանսպորտային միջոցը բարձման համար տրամադրելու պահից ողջամիտ ժամկետում:
2.6. Հաճախորդի կողմից Բեռի հանձնումը Փոխադրողին հաստատվում է Կողմերի կողմից սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 2-ով նախատեսված Բեռնագրի ստորագրությամբ (այսուհետ՝ Բեռնագիր):
2.7. Փոխադրողը պարտավոր է մինչև բեռնափոխադրումը սկսելը հաճախորդին տրամադրել Բեռնագիրը ստորագրող լիազորված անձանց (վարորդների) անձը հաստատող փաստաթղթերի պատճենները: Փոխադրողը պարտավոր է բեռնափոխադրման ընդունված բեռը նշանակման վայր (բեռնաթափման վայր) հասցնել տրանսպորտային միջոցը բարձվելուց հետո 24 (քսանչորս) ժամվա ընթացքում, եթե այլ ժամկետ նշված չէ Կողմերի միջև համաձայնեցված Հայտում:
2.8. Հաճախորդն իրավունք ունի Բեռի ամբողջականությունը ապահովելու նպատակով կիրառել կապարակնիքներ (ժապավենաձև կնիքներ) կամ այլ միջոցներ, որոնց անվնաս պահպանման համար պատասխանատվությունը կրում է Փոխադրողը:
2.9. Փոխադրողը ապահովում է տրանսպորտային միջոցների բեռնաթափումը, եթե կողմերի միջև նախապես այլ բան գրավոր չի համաձայնեցվել:
2.10. Բեռափոխադրումն ավարտվում է, երբ Փոխադրողը բեռը և ապրանքուղեկից փաստաթղթերը բեռնաթափման վայրում կամ Հաճախորդի կողմից նշված այլ վայրում հանձնում է ստացողին: Բեռը և ապրանքուղեկից փաստաթղթերը (ուղեկցող փաստաթղթերը) Փոխադրողի կողմից Հաճախորդին կամ վերջինիս կողմից Հայտում նշված անձին (այսուհետ՝ նաև Ստացող) հանձնելը հաստատվում է Ստացողի և Փոխադրողի կողմից Բեռնագրի ստորագրությամբ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Փոխադրողը պարտավոր է.
3.1.1. իրականացնել Հաճախորդի կողմից հանձնարարված բեռնափոխադրումը և մատուցել դրա հետ կապված անհրաժեշտ ծառայությունները հաստատված Հայտերին համապատասխան,

3.1.2. հանձնարարված բեռնափոխադրումն իրականացնելիս օգտագործել բացառապես համապատասխան Բեռի փոխադրման համար նախատեսված և սարքին վիճակում գտնվող տրանսպորտային միջոցներ,
3.1.3. մինչև Բեռը բեռնելը ստուգել Բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցների սարքին լինելը,
3.1.4. ապահովել, որպեսզի Հաճախորդի Բեռներն ընդունող և հանձնող անձը, որպես Փոխադրողի ներկայացուցիչ, ամբողջությամբ և պատշաճորեն կատարի այն բոլոր գործողությունները, որոնք նախատեսված են այդ Բեռի հետ կապված Հաճախորդի հետ կնքված պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բեռի հանձնման և ընդունման պահանջներով և/կամ գործարար շրջանառության մեջ ընդունված սովորույթներով,
3.1.5. անմիջապես տեղեկացնել Հաճախորդին բոլոր խնդիրների, հնարավոր ուշացումների, Բեռին սպառնացող վտանգների մասին, որոնք կծագեն բեռնման/բեռնաթափման, ինչպես նաև բեռնափոխադրման ընթացքում.
3.1.6. անհապաղ գրավոր տեղեկացնել Հաճախորդին ճանապարհին Բեռի ուշացման, պատահարների և այլ չնախատեսված իրավիճակների վերաբերյալ, որոնք արգելք են հանդիսանում փոխադրումը ժամանակին և պատշաճ կատարելու համար,
3.1.7. ժամանակ առ ժամանակ զննել և կատարել Բեռի քանակական հաշվարկ, արտաքինից ստուգել փաթեթավորման վիճակը և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել Հաճախորդին,
3.1.8. Հայտով սահմանված Բեռը հասցնել նշանակման վայր ամբողջական, և անվնաս կապարակնիքներով (ժապավենաձև կամ այլ կնիքներով՝ դրանց առկայության դեպքում).
3.1.9. Հաճախորդի պահանջով նրան անմիջապես տրամադրել բեռնափոխադրման ընթացքի, Բեռի գտնվելու վայրի, ինչպես նաև ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ ցանկացած տեղեկություն.
3.1.10. չխոչընդոտել Հաճախորդին ստուգել սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքը և որակը:
3.1.11. Կողմերը հաստատում են, որ սույն պայմանագրով Փոխադրողին հանձնվող Բեռը հանդիսանում է Հաճախորդի սեփականությունը, այն որևէ պայմանով Փոխադրողի կողմից չի կարող պահվել ապահովելու Հաճախորդի սույն պայմանագրից բխող պարտավորությունների կատարումը: Փոխադրողը պարտավորվում է ցանկացած ժամանակ ապահովել Հաճախորդի ազատ մուտքը/մոտեցումը բեռին և որևէ կերպ չխոչընդոտել Հաճախորդի կողմից սեփական հայեցողությամբ բեռը վերցնելուն: Փոխադրողը պարտավոր է բեռը երրորդ անձանց ի պահ հանձնելու անհրաժեշտության/մտադրության դեպքում ստանալ Հաճախորդի նախնական գրավոր համաձայնությունը և երրորդ անձանց հետ պահատվության պայմանագրում պարտավոր է ամրագրել Հաճախորդին որպես բեռի սեփականատեր, ինչպես նաև Հաճախորդի՝ բեռին անարգել մոտենալու և բեռը սեփական հայեցողությամբ վերցնելու իրավունքները: Սույն կետով նախատեսված պայմանները խախտող Փոխադրողի կողմից կնքված ցանկացած պայմանագիր/համաձայնություն համարվում է սույն պայմանագրի էական պայմանի խախտում և առաջացնում Հաճախորդի իրավունք՝ անհապաղ լուծելու պայմանագիրը, պահանջելու վերադարձնել Փոխադրողի տիրապետման ներքո գտնվող Բեռը (այդ թվում՝ որևէ երրորդ անձի փոխանցված լինելու պարագայում), ինչպես նաև հատուցելու Բեռը Հաճախորդի տիրապետմանը վերադարձնելու համար կատարված (կատարվելիք) բոլոր ծախսերը, վճարելու բաց թողնված օգուտը: Սույնով Փոխադրողը տալիս է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը առ այն, որ նկարագրված դեպքերում Հաճախորդը իր խախտված իրավունքների պաշտպանությունը և/կամ վերականգնումը կարող է իրականացնել միանձնյա (առանց որևէ կերպ Փոխադրողի հետ քննարկման կամ համաձայնեցման), և Փոխադրողն առանց առարկության ընդունում է դրանց արդյունքով ստացվող ցանկացած վերջնարդյունք՝ պարտավորվելով հատուցել/փոխհատուցել Հաճախորդի կրած վնասները ամբողջ ծավալով: :
3.2. Փոխադրողն իրավունք ունի.
3.2.1. պահանջել Հաճախորդից կատարելու սույն Պայմանագրով սահմանված իր պարտականությունները.
3.2.2. ստանալ վարձատրություն՝ սույն Պայմանագրով սահմանված չափով և կարգով.
3.2.3. պահանջել Հաճախորդից չխոչընդոտել ծառայությունների մատուցման ընթացքին.
3.2.4. չկատարել (կասեցնել) Հայտերով սահմանված փոխադրումները՝ մինչև սույն Պայմանագրի 3.3.2 ենթակետով սահմանված ուղեկցող փաստաթղթերը և սույն Պայմանագրի 3.3.4 ենթակետով

սահմանված լիազորագրերը Փոխադրողին (կամ վերջինիս համապատասխան աշխատակցին) ներկայացնելը: Ընդ որում, սույն ենթակետում նկարագրված դեպքերում Փոխադրողի կողմից փոխադրումների կասեցումը (չկատարումը) չի համարվելու սույն Պայմանագրի դրույթների խախտում,

3.3. Հաճախորդը պարտավոր է.

3.3.1. Նախապատրաստել բեռները բարձման և բեռնափոխադրման համար՝ համաձայն Փոխադրողի հետ համաձայնեցված պայմանների.

3.3.2. Կատարել անհրաժեշտ ձևակերպումներ և մինչև յուրաքանչյուր փոխադրման սկիզբը Փոխադրողին տրամադրել Բեռներին առնչվող ապրանքա-տրանսպորտային, մաքսային և/կամ ՀՀ հարկային օրենսգրքով պահանջվող այլ ուղեկցող փաստաթղթերը (ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով, Բեռներին առնչվող հարկային հաշիվները, ապրանքի տեղափոխության բեռնագրերը), որոնք անհրաժեշտ են Բեռի փոխադրումն անարգել ապահովելու համար.

3.3.3. սույն Պայմանագրում սահմանված կարգով և չափով Փոխադրողին վճարել մատուցված ծառայությունների դիմաց.

3.3.4. անհրաժեշտության դեպքում Փոխադրողի պահանջով վերջինիս (կամ նրա աշխատակցին) տրամադրել սույն Պայմանագրով նախատեսված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ լիազորագրեր.

3.4. Հաճախորդն իրավունք ունի.

3.4.1. պահանջել Փոխադրողից կատարել սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունները.

3.4.2. պահանջել Փոխադրողից հատուցել ծառայությունների մատուցման ընթացքում (և/կամ դրանով պայմանավորված) իրեն պատճառված վնասները.

3.4.3. պահանջել Փոխադրողից տեղեկատվություն՝ սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքի մասին.

3.5. Կողմերն ունեն նաև սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

4. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդը Փոխադրողին վճարում է սույն պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված սակագներին համապատասխան:

4.2. Յուրաքանչյուր օրացուցային ամսվան հաջորդող երրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ Կողմերը վավերացնում են ակտ (համաձայն սույն պայմանագրի Հավելվածի N 3-ով սահմանված ձևի), որում արձանագրում են նախորդ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունները, փոխադրված Բեռների քանակը, բեռնափոխադրման ամսաթվերը և ծառայությունների դիմաց վճարման ենթակա ամբողջ գումարը (այսուհետ՝ **Ակտ**): Ակտի երկկողմանի վավերացման պահից ոչ ուշ, քան հաջորդ օրը՝ Փոխադրողը պարտավոր է դուրս գրել Ակտին համապատասխանող հարկային հաշիվ՝ ուղարկելով այն Հաճախորդին: Ծառայությունների մատուցման ավարտին կամ հաշվետու ամսվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ակտը ուղարկվում է procurement@zcmc.am, Paytsar.Petrosyan@zcmc.am և Artak.Nahapetyan@zcmc.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

4.3. Հաճախորդը վճարում է Փոխադրողին Պայմանագրի 4.2 կետում նշված հարկային հաշիվը դուրս գրելուց հետո՝ քառասունհինգ օրացուցային օրվա ընթացքում:

4.4. Հաճախորդի կողմից վճարումները կատարվում են անկանխիկ՝ սույն պայմանագրով սահմանված՝ Փոխադրողի բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը Պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Պայմանագրով իր պարտավորությունները խախտող կողմը պարտավոր է անհապաղ վերացնել այդ խախտումները:

5.3. Փոխադրողը պատասխանատվություն է կրում Բեռի կորստի, պակասորդի, վնասվածքի համար, որը տեղի է ունեցել Բեռն բեռնափոխադրման համար ընդունելուց հետո, մինչև Բեռն Ստացողին հանձնելը:

5.4. Բեռի բեռնափոխադրման ժամանակ պատճառված վնասը Փոխադրողը հատուցում է՝

1) Բեռի կորստի կամ պակասորդի դեպքում՝ կորած կամ պակասած Բեռի արժեքի չափով.

2) Բեռի վնասվածքի դեպքում՝ այն գումարի չափով, որով նվազել է դրա արժեքը, իսկ վնասված բեռի վերանորոգման (վերականգման) անհնարինության դեպքում՝ դրա ամբողջ արժեքի չափով.

3) Բեռի ամբողջ արժեքի չափով՝ բեռի կորստի դեպքում:

4) 3.1.12 կետով նկարագրված խախտումներով պատճառված վնասը՝ այդ կետով նախատեսված կարգով և չափով:

Բեռի արժեքը որոշվում է Բեռի առուվաճառքի պայմանագրով կամ Հաճախորդի հաշիվներում նշված գնից, իսկ հաշվում գնի վերաբերյալ պայմանի բացակայության դեպքում՝ այն շուկայական գնից, որը համեմատելի հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների համար:

5.5. Բեռի կորստի, էական պակասորդի և էական վնասվածքի հետևանքով առաջացած վնասի հատուցման հետ մեկտեղ

- Փոխադրողը Հաճախորդին վերադարձնում է կատարված վճարումը, որը գանձվել էր կորած, պակասած կամ վնասված Բեռի բեռնափոխադրման համար, եթե վճարումն արդեն իսկ կատարվել է:

- Հաճախորդը ազատվում է պակասած կամ վնասված Բեռի բեռնափոխադրման համար վճարման պարտավորությունից:

Սույն կետի իմաստով.

- Բեռի էական պակասորդ է համարվում Բեռի ընդհանուր ծավալի 5 և ավելի տոկոսով պակասորդը.

- Բեռի էական վնասվածք է համարվում այնպիսի վնասվածքը, որը հանգեցրել է Բեռի արժեքի 5 և ավելի տոկոսով նվազման, կամ վնասված Բեռի վերանորոգման անհնարինության:

5.5.1. Բեռին պատճառված վնասի չափը կամ կորցրած (ոչնչացված) Բեռի արժեքը որոշելու համար Փոխադրողի և/կամ Հաճախորդի պահանջով կարող է ներգրավվել անկախ փորձագետ՝ համապատասխան պահանջը ներկայացնելու ամսաթվից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ Բեռի վնասման և/կամ կորստի (ոչնչացման) մեղավորությունը Փոխադրողինն է, ապա փորձագաքննության եզրակացության համար բոլոր վճարումները կատարվում են (իսկ Հաճախորդի կողմից կատարված լինելու դեպքում՝ փոխհատուցվում են) Փոխադրողի կողմից:

5.6. Սույն պայմանագրով և/կամ Հայտով սահմանված փոխադրման ժամկետները (բեռնափոխադրման, բեռնման / տրանսպորտային միջոցը բեռնման համար տրամադրելու համար սահմանված) Փոխադրողի կողմից խախտվելու դեպքում Հաճախորդը իրավունք ունի Փոխադրողից պահանջելու վճարել տույժ՝ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի ուշացման յուրաքանչյուր օրվա համար 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով, իսկ այն դեպքում երբ ժամկետը խախտվում է ավելին քան 5 օրացուցային օր վերոգրյալ տույժից զատ Հաճախորդն իրավունք ունի պահանջել, իսկ Փոխադրողը պարտավոր է Հաճախորդին վճարել միանվագ տուգանք՝ Հայտով փոխադրման արժեքի 40 (քառասուն) տոկոսի չափով: Սույն կետով սահմանված տույժի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը:

5.7. Եթե Հայտի հաստատվելուց հետո Փոխադրողը առանց որևէ հիմնավորման հրաժարվում է բեռնափոխադրումն իրականացնելուց, ապա Հաճախորդն իրավունք ունի Փոխադրողից պահանջել վճարելու տուգանք՝ սույն Պայմանագրին համապատասխան տվյալ Հայտի դիմաց վճարման ենթակա բեռնափոխադրման (փոխադրման) արժեքի մինչև (100 տոկոսի) չափով:

5.8. Սույն Պայմանագրով սահմանված վճարման ժամկետները Հաճախորդի կողմից խախտվելու դեպքում Փոխադրողն իրավունք ունի Հաճախորդից պահանջելու վճարել տույժ՝ բեռնափոխադրման համար վճարման ենթակա, սակայն չվճարված, գումարի 0.1 տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար, սակայն ոչ ավել քան չվճարված գումարի 10%-ը:

5.9. Հաճախորդը պարտավոր է փոխհատուցել Փոխադրողի ցանկացած փաստացի կրած վնասները (ներառյալ, սակայն չսահմանափակվելով, պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, հրամանների և/կամ այլ վարչական ակտերի ընդունմամբ Փոխադրողին պատճառված վնասները), որն առաջացել է ուղեկցող փաստաթղթերը

սույն Պայմանագրի 3.3.2 ենթակետով սահմանված կարգով Հաճախորդի կողմից Փոխադրողին չներկայացնելու և/կամ դրանք ոչ ամբողջական և/կամ թերություններով ներկայացնելու հետևանքով:
5.10. Սույն պայմանագրով նախատեսված տուգանքները, տույժերը և փոխհատուցումները ենթակա են վճարման այդ մասին մյուս կոմից պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

6.1. Կողմերը ազատվում են պատասխանատվությունից սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ ամբողջական չկատարելու համար, եթե պարտավորությունների պատշաճ կատարումը հնարավոր չէր անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով, այսինքն արտակարգ և անհաղթահարելի հանգամանքների դեպքում՝ բնական աղետ, պատերազմ կամ պատերազմական գործողություններ, արտադրության կրճատում կամ կանգ, պետական մարմինների կողմից ակտեր, արտահանման կամ ներմուծման արգելում:
6.2. Վերը նշված հանգամանքների վրա հասնելու դեպքում Կողմը պարտավորվում է անհապաղ գրավոր տեղեկացնել մյուս կողմից այդ մասին: Վերը նշված անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքների առկայության ապացույց է հանդիսանում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրամադրված տեղեկանքը :
6.3. Այն դեպքում, երբ Փոխադրողը Պայմանագրով նախատեսված ֆորս-մաժորային իրավիճակների ծագման հետևանքով չի կատարում իր պայմանագրային պարտականությունները, ապա Փոխադրողը պարտավորվում է վերադարձնել Հաճախորդին ստացած կանխավճարն ամբողջությամբ (դրա առկայության դեպքում)՝ Հաճախորդի կողմից գրավոր պահանջի ներկայացման պահից՝ 10 օրյա ժամկետում:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.2. Սույն պայմանագրի դրույթների և դրա հիման վրա ծագած հարաբերություններից բխող վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների նախաձեռնման ամսաթվից տասնօրյա ժամկետում արդյունքի չհասնելու դեպքում՝ դատական կարգով:
7.3. Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները կազմվում են մեկ միասնական փաստաթղթի ձևով և ստորագրվում Կողմերի ներկայացուցիչների կողմից:
7.4. Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:
7.5. Սույն պայմանագրի պայմանները և դրա իրականացմանն առնչվող այլ տեղեկությունները առևտրային գաղտնիք են և Փոխադրողի կողմից հրապարակման ենթակա չեն, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրումից հետո՝ առաջին էջում նշված ամսաթվից և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Եթե սույն պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կամ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Պայմանագրի 8.2 կետով սահմանված կարգով պայմանագիրը լուծվելու օրվա դրությամբ Հաճախորդը կամ Փոխադրողը ունեն միմյանց հանդեպ չկատարված պարտականություններ, ապա նրանց պարտավորությունները պահպանվում են մինչև դրանց ամբողջական պատշաճ կատարումը:
8.2. Սույն պայմանագիրը վաղաժամ միակողմանիորեն արտադատական կարգով կարող է լուծվել Հաճախորդի կողմից՝ երեսուն օր առաջ նախապես գրավոր ծանուցելով Փոխադրողին: Ընդ որում, սույն կետով Պայմանագիրը համարվում է լուծված պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը Փոխադրողին՝ սույն պայմանագրով նկարագրված որևէ եղանակով տրամադրելու օրվանը հաջորդող երեսունմեկերորդ օրացուցային օրը: Պայմանագրի լուծումը չի ազատում Կողմերին մինչև լուծման վերաբերյալ ծանուցումը առաջացած բոլոր պարտավորությունների կատարումից:
8.3. Եթե Փոխադրողը պարբերաբար (այն է՝ երկու և ավելի անգամ) չի կատարում սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները, Հաճախորդն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ այդ մասին հինգ օրացույցային օր

առաջ ծանուցելով Փոխադրողին: Ընդ որում, սույն կետով Պայմանագիրը համարվում է լուծված պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը Փոխադրողին՝ սույն պայմանագրով նկարագրված որևէ եղանակով տրամադրելու օրվանը հաջորդող վեցերորդ օրացուցային օրը:

8.4. Սույն պայմանագրի շրջանակում Պայմանագրում նշված կողմերի էլեկտրոնային հասցեներին ուղղված ծանուցումները, ինչպես նաև վավերապայմաններում նշված Կողմերի հասցեներով փոստային կապի միջոցով նամակների ուղարկումը, համարվում են պատշաճ ծանուցումներ:

8.5. Սույն պայմանագրի դրույթները մեկնաբանվում են դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստը և կողմերի նպատակները սույն պայմանագիրը կնքելիս:

8.6. Եթե սույն պայմանագրի որևէ դրույթ ճանաչվում է անվավեր կամ դառնում է անկիրարկելի, ապա այն պետք է վերանայվի գործող օրենսդրության շրջանակներում՝ կողմերի մտադրությունը վերականգնելու նպատակով: Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը կամ անկիրարկելիությունը չի ազդում պայմանագրի որևէ այլ դրույթի վավերականության կամ կիրարկելիության վրա: Կողմերը համաձայնվում են չշահարկել սույն պայմանագրի որևէ դրույթի անգործադրելիությունը՝ պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների կատարումից խուսափելու համար:

8.7. Կողմերից յուրաքանչյուրը հավաստում է և ընդունում, որ ստացել է սույն պայմանագրի կնքման համար անհրաժեշտ բոլոր պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրվող թույլտվությունները, լիցենզիաները, ինչպես նաև սույն պայմանագրից բխող գործարքը կնքելու համաձայնությունները (ներառյալ, սակայն չսահմանափակվելով, Կողմերի կառավարման մարմինների հաստատումները, որոշումները, հավանությունները):

8.8. Սույն պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ հայերեն: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

8.9. Սույն Պայմանագրին կցվում և վերջինիս անբաժան մաս են հանդիսանում հետևյալ Հավելվածները.

Հավելված N 1 – «Սակագներ՝ բեռնափոխադրման ծառայությունների»
Հավելված N 2 – «Բեռնագրի Ձևանմուշ»
Հավելված N 3 – «Ակտի Ձևանմուշ»
Հավելված N 4 – «Հայտի Ձևանմուշ»

9. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաճախորդ՝	Փոխադրող
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	«----------» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան,	Հասցե՝ ----------
Լեռնագործների 18	ՀՎՀՀ՝ ----------
ՀՎՀՀ՝ 09400818	Բանկ՝----------
Բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, Քաջարանի մ/ճ	հ/հ՝----------
հ/հ՝ 247350000516	Էլ. հասցե՝----------
Էլ. հասցե՝ paytsar.petrosyan@zcmc.am; info@zcmc.am	
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

Հավելված N 1՝ կնքված « ____ » « ____ » 202 թ.
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և «----------» ՍՊԸ
միջև «____» «____» 202 թ. կնքված բեռնափոխադրման թիվ _____ պայմանագրի

Սակագներ՝ բեռնափոխադրման ծառայությունների

Ցանկ 1

N	Երթուղին	Սակագինը (ՀՀ դրամ) 1 (մեկ) տոննա բեռի համար՝ առանց ԱԱՀ
1.	Քաջարան քաղաքից դեպի Երևան քաղաք	
2.	Քաջարան քաղաքից դեպի Չարենցավան քաղաք	

Հաճախորդ՝
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան,
Լեռնագործների 18
ՀՎՀՀ՝ 09400818
Բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, Քաջարանի մ/ճ
h/h՝ 247350000516
Էլ. հասցե՝ paytsar.petrosyan@zcmc.am; info@zcmc.am

_____
ստորագրություն

Փոխադրող
«----------» ՍՊԸ
Հասցե՝ ----------
ՀՎՀՀ՝ ----------
Բանկ՝----------
h/h՝----------
Էլ. հասցե՝ ----------

_____
ստորագրություն

Հավելված N 2՝ կնքված « ____ » « ____ » 202 թ.
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և ---------- ՍՊԸ
միջև «____» «____» 202 թ. կնքված բեռնափոխադրման թիվ _____ պայմանագրի

Բեռնագրի Ձևանմուշ

ԲԵՌՆԱԳԻՐ

Բեռը փոխադրողի անվանումը	
Ուղեկցող փաստաթղթի համարը	
Բեռի անվանումը	
Բեռը ստացողի տվյալները	
Առաքվող ապրանքների գինը (արժեքը) հանրագումարով	
Առաքվող ապրանքների նշանակման վայրի հասցեն	
Ընդունող կազմակերպության անվանումը	
Վարորդի ազգանունը, անունը	
Տրանսպ. միջոցի պետ. համարանիշը	
Տրանսպ. միջոցի մակնիշը	
Առաքման վայրի հասցեն	
Բեռը փոխադրողի ՀՎՀՀ	
Առաքող կամ տեղափոխող կազմակերպ. Անվանումը	
Առաքման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը	
Ուղեկցող փաստաթղթի դուրս գրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը	

Բեռնված տրանսպ. միջոցի քաշը	

Տրանսպ. միջոցի քաշը	
Բեռի քաշը	

Հանձնեց՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ունունից՝ _____

Ընդունեց ---------- ՍՊԸ անունից՝_____

Սույնով Փոխադրողը և Հաճախորդը հաստատում են, որ Հաճախորդը պատշաճ հանձնել է, իսկ Փոխադրողը ընդունել է սույն Բեռնագրում նշված Բեռն ամբողջ ծավալով և Բեռը ուղեկցող փաստաթղթերը:

Փոխադրող
---------- ՍՊԸ

_____
ստորագրություն

Հաճախորդ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

_____
Ստորագրություն

Հավելված N3՝ կնքված « ____ » « ____ » 202 թ.
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և ---------- ՍՊԸ
միջև «____» «____» 202 թ. կնքված բեռնափոխադրման թիվ _____ պայմանագրի

Ակտի Ձևանմուշ

ԱԿՏ

20 _թվականի **_____ ամսվա ընթացքում մատուցված բեռնափոխադրման ծառայությունների**

ք. _____ «____» «____» 20___թ.

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (այսուհետ՝ Հաճախորդ)՝ ի դեմս Գործադիր տնօրեն Անդրեյ Սինյակովի, ով գործում է Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից տրված և «Երևան» նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանի կողմից 2023թ. Հուլիսի 10-ին վավերացված, ըստ գրանցամատյանի թիվ 7473, լիազորագրի հիման վրա, մի կողմից, և ---------- ՍՊԸ (այսուհետ՝ Փոխադրող)՝ ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Հրաչյա Քոթանջյանի, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, յուրաքանչյուրն առանձին՝ նաև Կողմ), կազմեցին սույն ակտը այն մասին, որ.
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության և ---------- ՍՊ ընկերության միջև 20___ թվականի _____-ի _____-ին կնքված թիվ _____ բեռնափոխադրման պայմանագրի համաձայն՝ 20___ թվականի _____ ամսվա ընթացքում մատուցվել է _____ փոխադրման ծառայություն, _____ ուղղությամբ, _____ քաշով:
բեռ՝ _____ ընդհանուր _____ քաշով:

Հայտ/եր/ով սահմանված բեռ/ներ/ը և ապրանքուղեկից փաստաթղթերը Փոխադրողի կողմից պատշաճ հանձնվել են համապատասխան Ստացողին:

20___թվականի _____ ամսվա ընթացքում մատուցված բեռնափոխադրման ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է _____ _____ ՀՀ դրամ:

Փոխադրող
---------- ՍՊԸ

_____
ստորագրություն

Հաճախորդ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

_____
ստորագրություն

Հավելված N4՝ կնքված « ____ » « ____ » 202 թ.
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և ---------- ՍՊԸ
միջև «____» «____» 202 թ. կնքված բեռնափոխադրման թիվ _____ պայմանագրի

Հայտի Ձևանմուշ

Հայտ No. _____		
Համաձայն՝ N ____ Տրանսպորտային առաքման պայմանագրի, կնքված ___.___.20____թ.		
Կազմման ամսաթիվ՝ ____.____.20____թ.		
Հաճախորդ՝		«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Փոխադրող՝		---------- ՍՊԸ
1	Առաքման երթուղի	
2	Առաքման ենթակա բեռը (բեռ)	
3	Բեռի քաշը, ծավալը, արժեքը	
4	Պահանջվող տրանսպորտի տեսակը և քանակը	
5	Բեռնման (տրանսպորտային միջոցը բեռնման համար տրամադրելու) ամսաթիվը	
6	Բեռնման հասցեն	
7	Գնորդ	
8	Բեռի առաքման ժամկետը	
9	Բեռնաթափման վայրը (նշանակման վայր)	
10	Բեռը ստացողը	
11	* Տրանսպորտային միջոց No.	
12	* Վարորդ	
13	Այլ տեղեկություններ	
«*» նշանով նշված տեղեկատվությունը հայտում լրացվում են Փոխադրողի կողմից, իսկ այդ նշանը չպարունակող տեղեկատվությունը Հայտում լրացվում է Հաճախորդի կողմից:		

Փոխադրող
---------- ՍՊԸ

_____
ստորագրություն

Հաճախորդ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

_____
ստորագրություն